

այժմ զգում է, որ դա ազատ ուժերը ոչինչ են ընդհանուր մրցման մէջ ուսուցանելու համար, եթէ նոքա միայն անհատներ յենւած իրենց սեպական ուժերի վրայ, կարողանում էին մի գործ կատարել, եւ ի՞նչ ինչպէս ներկայ պայմաններում այդ տեսակ յանդուգնները սկզբից եւ եթէ պատասխանում են ամենատեսակի անկման և Այդ է ցոյց սալիս իրականութիւնը եւ հանրային կեանքը, ինչի գա մի փոքրիկ ձեռնարկով թեան մէջ, առեւտրական ի՞նչ քաղաքական աշխարհում, միեւնոյն է Ահա այդ կենսական հարցն է որ վերջերս առանձին մասնագիտութեան առարկայ է դառնել ի՞նչ ուսանողական ընկերական շրջաններում, ի՞նչ գանձաւոր ցիր ու ցան եղած հայ գաղութներին մէջ եւ ի՞նչ իսկական յեղափոխականներին մէջ, Այդ այդպէս պահանջն է որ ստեղծեց եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը, մասնաճիւղ հայրենիքի սիրով ստեղծուած իսկական յեղափոխականներին եւ առաջ բերեց ուրիշ միութիւններ, Այդ հրատապ հարցն է որ վերջերս առանձնապէս մեծ եռանդով արժարեւում է մամուլի մէջ, Ե. Հ. Ո. Մ. յանձին իր կարգադիր յանձնաժողովի ազգային գործ է կատարել եւ կատարում է այդ ասպարէզի վրա եւ վաղուց է հրաւեր կարդացել ուրիշ երկիրներին ուսանողութեան մասնակցելու արդէն գոյութիւն ունեցող միութեան հետ, եւ յոսով եմ ապագային չեն անցնի նորա սխառտանքը, Իսկ նորերս «Շայտու»ի մէջ մեծ սիրով կարգադիր Գ. Մարգարեանը յօդուածը նոյն նիւթի վերաբերեալ եւ նոյն հրապարակական հրատարակութեան ուսանողութեան զեպի միութիւն :

Եւ ի թուր սրաէ յաջողութիւն բարեմակութեամբ այդ հրաւերին, գալիս եմ լրացնելու յօդուածագրի այն պակասը, որ նա յուզել է բայց իրեն անձեռնդաս համարելով այդ մասում, Իսկ Ռուսաստանի հայ ուսանողութեան միութեան հարցն է :

Ռուսաստանի հայ ուսանողութիւնը զխաւորապէս խառնած է Պետերսբուրգ, Մոսկու, Խարքով, Կիւի և Բիւրի համալսարանական քաղաքներում եւ կազմում են գլխաւորապէս կովկասցիներին, ապա նոր նախնիներն, Բեսարաբիա, Ռիբի և այլն, Նոքա թիւր պէտք է հայտել մօտաւորապէս 300 հոգի եւ սովորում են մեծ

մասամբ բժշկութիւն, իրաւաբանութիւն եւ մեքենայագործութիւն, Հաւաքուելով Ռուսաստանի գանձաւոր անկիւններին, հայ աարբը մի տեսակ բնագրական պահանջ է զգում իւրայիններին գանել եւ ծանոթանալ նոցա հետ, եւ ահա այդ միացման առանցքը ամէն մի համալսարանական քաղաքում գոյութիւն ունեցող Հայ Ուսանողական ընկերութիւններն են կազմում որի շուրջը հաւաքուում են իւրաքանչիւր ընկերութեան նպատակն է :

Նիւթական եւ բարոյական աջակցութիւն ընկերական բոլոր անդամներին եւ աշխատել բարձրացնել նոցա մտաւ ու զարգացողութեան մակարդակը : Տեսնենք որքան են նոքա պատասխանում այս պահանջներին : Նիւթական աջակցութիւն, պէտք է խոստովանել, նոքա իրենց զանձարաններին, նոքա կարողանում են կատարել (իւրաքանչիւր ընկերութիւն առնուազը ունի մինչեւ 500 ր. 1325 Քր.) միայն անձեռնմխելի դրամ, իսկ կան այնպիսիներ որ մինչեւ 1000 ր. կամ 2650 Քրանք) իսկ ինչ վերաբերում է բարոյական աջակցութեան այդ բաժը մտցնելիս կանոնադրութեան մէջ, Երեւի իրենք մտցնողներն չեն լաւ հաշիւ տուել իրենց, ի՞նչ ինչ են հասկանում այդ բանի տակ, եւ ոչ սերունդից սերունդ անցնող ուսանողներն են նեղութիւն կրում ըմբռնելու այդ խօսքի իմաստը եւ այդպէս նա միւրում է միշտ մեռել կէտ կանոնադրութեան մէջ : Դալով կանոնադրութեան միւս զԵԼ-խաւոր նպատակին, որ պէտք է ծառայէ ուսանողներին զարգացողութեան մակարդակը բարձրացնելու օգտին, պէտք է նկատել, որ ընկերութիւնը ոչ մի միջոց չէ ինչպիսի օժանդակից պարագաներ ձեռք բերելու եւ այդ նպատակով պահում է հարուստ զբաղարան հայերէն եւ ուսանողներին զբաղեցնելու, ստանում է ամառաբեր եւ լրագիրներ եւ դնում ընկերութեան անդամների կատարեալ տրամադրութեան տակ : Բացի այդ նա կազմում է գրականական ժողովներ որտեղ պիտի կարդացուին դասախօսութիւններ, գլխաւորապէս հայերէն լեզուով գրուած, վիճաբանութիւններ եւ այլն, ինչպէս տեսնում էք հայի կտրուակներով ոգին այստեղ եւս մեծ գործ է կատարել, Տէք հային կանոնադրութիւններ եւ ծրագիրներ կազմել, բայց միամտութիւն մի ունենալ իր սեպական ձեռքերով

կազմած ծրագրի իրագործումը պահանջել, նա այդ զէպում երես չունի : Միտքս պարզելու համար մտնենք ընթացողի հետ այդ գրականական ժողովներից մէկն ու մէկը եւ կր տեսնենք, որ 80 անգամ ունեցող ընկերութիւնը հազիւ թէ 10 հոգի է ուղարկել այդ տեղ : Դասախօսութիւնը կարգաւորում է ուսանողներն, կամ վիճաբանում են ուսանողներն, կամ բոլորովին չեն վիճաբանում : Հետաքրքրուի՞նք մի երեկոյ էլ ընդհանուր ժողովներով, տեղը հերթական հարցեր են լուծուում : Այստեղ կենդանութիւն է տիրում, հաւաքուել են բաւականաչափ անդամներ, տաք տաք խօսում վիճաբանում են, Ձեր ամբողջ ուշադրութիւնն էք լարում մի բան հասկանալու, բայց ի գուր, ժողովից դուրս գալով ոչինչ չը պիտի հասկանաք, քանի որ միամտութիւն էք ունեցել տանց ուսանողներն իմանալու ներկայ լինել հայոց ժողովին :

(Շարունակելի)

ՎԵՐԱՅՈՂ ՇՐՋԱՆԷՆ ՆՈՐԵՐ

(Շար. Ասիտոյ քիւիկ եւ վեր)

Տիրիպէի գաղթական ընտանիքներու եւ պանդուխտներու թիւին վրայ նոր յաւելում մը չըլլար երբեք, ընդհակառակը օրէ օր կը պակսին, շատերուն հետեւեալ հայրենիք վերադառնալու պատճառաւ :

Պանդուխտներ հոս նշանակելի թշուառութիւն մը չունին, բոլորն ալ իրենց ապրուստը ճարելու չափ մէյմէկ գործ գտած կ'աշխատին :

Գովելի է քաղաքիս Աղքատախնային ջանքերը, որ կը փութայ օժանդակել պատահաբար քաղաքս եկող անօգնական պանդուխտներուն :

Քանի որ խօսքս Աղք. մասնախումբին վրայ է, թող ներսի հոս նկատողութիւն մը ընել իրենց :

Բացորոշ յայտնի է որ Աղքատախնային հասոյթի գլխաւոր աղբիւրն է գաղթական տարրը եւ վաճառական դասակարգը : Մէկէ աւելի անգամներ գանձանակը պտտցնողներէն իմացած եմ որ տեղացիներէն մաս մը, մասնաւորապէս 1-2 Տիւրք իրենց մտքը գնացող գանձանակը գոնէ 10 անթիւմ չը ձգելու համար կամ օրնայէթ օրսունս կը պատասխանեն եւ կամ կը պահոււն, «չօրպաճին հոս չէ» ըսել տալով իրենց սպասուորին : Փափաքելի էր որ Աղք. մասնա-

խումբը իր հաշուեկշիռներէն մէկով համեմատական մէկ ցանկը կամ հաշիւը ներկայացնէր հասարակութեան թէ՛ արդեօք տեղացի՞ աղքատները թէ՛ պանդուխտները շատ նպաստ կը ստանան Աղքատախնային : Իմ կարծիքով ասի շատ գործնական պատասխան մըն է աղքատին «երես դարձնող» այդ մէկ երկու ջոջիւրն :

Նօթերուս միութեան շարքերուն մէջ եթէ պիտի պարտաւորուիմ զետեղել սիրտ մաշող կէտ մը, ան ալ վարժարանն է, որ այս տարի գոհացուցիչ արդիւնք մը չունեցաւ, մասնաւոր չըլլան կէսէն ասոյն սկսաւ աւելի կաղայ, հոն գայթակղացուցիչ եւ յուսահատացուցիչ զէպերն ալ իրեն որոշ տեղը ունեցան . . . Իսկ յատուկ կայ շրջանը ալ աւելի տխուր պոյներով կը ներկայանայ մեր աշխարհն առջեւ . . . Ընտանիքներն մեծ մասը հիմակուրէն որոշած են տղաքներն չը զրկել, երբ, Պ. Պիտեան եւ Մանուէլեան, վարժարանին ամենէն կենսական եւ կորովի ուժերը, արդէն վերջնականապէս հեռացած են չը հանդուրժելով տեղի ունեցածներուն :

Վարժարանը ամենուս սրտին մօտիկ հաստատութիւնն է, կարծէր որ անոր վրայ ալ աւելի ընկալածակ գրէի, բայց աս այժմ չեմ ուզեր, հաստատ գիտնալով որ, ամէն մէկ անկեղծ խոստովանութիւն, ամէն ճիշտ մարտ քննադատութիւն պիտի խճճուի :

Հրանդ-Փիրայր

ՃԵՐԻՃԵԱՆԻ ՎԱՐՄԱՐԱՆԸ

Անցեալ կիրակի ձիերճեանի վարժարանին տարեկան հանգէսը կատարուեցաւ : Ասոր նկարագրութիւնը ընելու միտք չունիմ, որովհետեւ միշտ նոյն անհամութիւնն է, որ քիչ կամ շատ տարբերութեամբ ամէնտարի կը կրկնուի թիւում ած տափակութիւններու շարք մը պարզելով, հասկցուած չի հասկցուած նիւթերու վրայ շինծու ճառեր կ'ապկեղով հիացումէն ապուշ կ'որած հասարակութեան մը առջեւ : Չեմ յիշերնաւ «գեղեցիկն», բարիին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒՍԷՐ

- Սակայն մտածեցի՞ր ծնողքդ, քոյրդ փոքր եղբայրներդ . . .
- Մտածեցի, օրիորդ . . .
- Իսկ ի՞նչ կըլլայ անոնց վիճակը երբ քեռէ զրկուին, դու՛ եւ անոնց միակ ապաւէնը, միակ յոյսը, իսկ քեզ կորսնցնելով, ապահովապէս վշտ կը մեռնին . . .
- Տիրութեան սեւ ամպ մը անցաւ Մուրասի դէմքին վրայէն . . .
- Գիտե՛մ . . . մրմնջեց հազիւ լրսեալ ձայնով . . .
- Չարուհի ակամայ սոսկումի արտայայտութեամբ մը նայեցաւ այդ անյողոզող տղուն, որ իր ծնողքը

կը թողուր, կը զոհէր իրեն հետեւելու համար, ո՛ւր . . . հայրենի տխուր ամայի լեռներու ծոցը, տանջուած, տառապող ժողովուրդին գրկին մէջ, սիրով գրկելով յեղափոխականի հրացանը, միմիայն իր սիրած աղջիկը իր մօտը ունենալու փափազով :

Գրեթէ քանի մը ամէն իմեր ծանօթացած էին, ազատ միջավայրի մը մէջ, ուր Չարուհի եկած էր դադար մը առնելու իր դժուարին պաշտօնէն :

Ինչ նուերուած էր իր կոյս սրտին ամբողջ զօրութեամբ հոյրենիքի թըլուառ մանուկներուն, այդ նորածիլ թարմ հիւթէն պատրաստելով իր երեւակայածին նման սերունդ մը :

Արգելքները չէին վնասեցուցած զինքը, խեղճ, թշուառ, անօգնական ժողովուրդէն զտած ընդունելութիւնը, իր շուրջը հաւաքուած այդ կիսամերկ, բոպիկ աղջիկներու աղաք-

ներու միամիտ, սէրը իրեն անհուն եռանդ մը կը ներշնչէին նոր ուժերով շարունակել իր սուրբ գործը :

Իր մէկ քանի ամսուան արձակուրդի ժամանակամիջոցին ծանօթացած էր Մուրասի հետ, որ առաջին վայրկեանէն գրաւած էր նուրբ կազմով բայց տոկուն, վեհ եւ անընկճելի հոգիով օժտուած այդ աղջիկէն :

Փայլուն ապագայ մը կը սպասէր Մուրասի, որուն կը ձգտէր մինչեւ այն րոպէն երբ իր էութեան մէջ նոր սէր մը, նոր եռանդի, նոր գաղափարի մը մուտքը գտայ :

Այդ նոր հոսանքը Չարուհիէն կուգար :

Առաջին վայրկեանէն սիրած էր անոր գաղափարները, ու իր երիտասարդ, տաք սրտին ամբողջ թափով կը ձգտէր զէպի այդ սուրբ, իտէլական գործը :

Որոշած էր հետեւել Չարուհիի, հայրենիքի բռնութեան խաւար քառսին մէջ :

Ո՛հ, որքա՛ն քաղցր պիտի ըլլար այն մահը, որ զիրենք պիտի ողորներ իրենց պարտականութեան ասպարէզին վրայ :

Իր որոշումը հաղորդած էր Չարուհիի որ կը ջանար զանազան առարկութիւններով զայն կասեցնել :

Աղջիկը իր վերջին պատճառաբանութիւնը բերած էր, կարծելով որ Մուրասի սիրտը պիտի խանդաղատէր իր ծնողներուն վրայ խօսելով անոր :

— Առանց քեզի կը մեռնին անոնք . . .

Սակայն սոսկալով լսած էր անոր տխուր խաւար արտասանած լմիակ բառը . . .

— Գիտե՛մ . . .

Երկար քով քով կը քալէին, իւ-

ու ճշմարտին» վրայ ազդական մը կողմէ արտասանուած այն հիւսնային ճառակերպ արտասանութիւնը, ուր Տագնէի պէս անունները թուրքական թափփփեցան Տանգէի անձանօթ դեռ տճաս բերանէ մը:

Տեղեկագրին մէջ, որ տեղեկագիր ըլլալէ զտ առէն բան էր, և ուր Պ. Ճիւրճեան չէր մոռցած այս տարի ալ ինամքով կրկին ալ յառաջաբանը զոր անցեալ տարիները պատրաստած էր, առաջադիւց զպրօցներուն օժանդակ խմբի կազմել, երբեմն թուրքի մէջ գտնուածներուն նման Պ. Ճիւրճեան զբարօցները «Ֆայրիքներու» և «վաճառատուններու» հետ նոյնացուցած ատեն, մոռցաւ որ, այդ «Միացեալներ» «Արարտեան» ներք զպրօց կը բանալին հոն, ուր չիկար, գտնուած տեղը հատ մըն ալ իրենք չէին տնկեր: Իսկ «Հօմ Սքուլ», «Սօպէրթ Քօլէժ» «Ֆրէրներ» իրենց սեպհական ազգութեան երկրէն դուրս կը գործեն, կրօնաքաղաքական նպատակով, և անոնց զպրօցները պարզ նախակրթարաններ չեն, ինչ որ ուշագրութեան պէտք է առնել, իսկ մեր երկրին պէս տեղերու մէջ այդ ընկերութիւնները ալ այն ատեն միայն օգտակար կը ըլլան, երբ նպատակ ունին ազգային վարժարանին աջակցելու: Խօսք շունինք եթէ անոնք բարձրագոյն վարժարան մը պահելու նպատակ ունին: Իսկ այն ատեն պէտք է կանոնաւոր նախակրթարաններ ապահովել:

Եւ սակայն ասոնք մանրուք բաներ են, բուն խելկատակութիւնը ետքէն պարզուեցաւ:

Մեր հռչակաւոր «պարկեշտ մարդուկը» Պ. Ճիւրճեանէն հրաժարուած՝ իբր թէ յանպատրաստից բեմ ելաւ և սկսաւ մալալ, և կակազել, յետոյ Ճիւրճեանը գովել, իբր տիպար վարժապետ, ինչու որովհետեւ Ճիւրճեան 3 զրուշով, 60 փարայով

ալ կրնայ եղեր ապրիլ, հետեւաբար արժանի է քաջաբերութուն, հիմակուհի մայ իրմէ լաւը չիկայ եւ ազգային վարժարանները անոր հետ բողոքատութեան չեն կրնար եղեր գործիլ իսկ:

Մենք կը հասկնանք «պարկեշտ մարդուկին» փոքր ցաւը. երբ տեսաւ որ ազգ. վարժարանին վրայ ակուսյ պիտի չի կրնայ բանեցնել, ծրագիրը փոխեց և խելճ Ճիւրճեանը ձեռք առաւ:

Մենք Ճիւրճեանը կը ճանչնանք, իր բոլոր կարողութիւնով «րէֆէրանսի» պէտք չունինք, ան ալ Աստուած գիտէ որո՞ւ կողմէ: Ճիւրճեան 20 տարուան պատուելի մըն է, շատ միջակ ու ողորմելի պաշարով. իբր ուսուցիչ կարելի է հինցածներու կարգը դասել, շատ մը իր ժամանակակիցներուն պէս: Իայց մինչեւ այսօր յաջողեցաւ Կրկնուց մը պահել շնորհիւ իր սուսիկ բնատրութեան բանի չի խառնուելուն և համակերպելու ընդունակութեամբ: Այսօր Պ. Ճիւրճեան չենք գիտեր ինչ բանէ գրողու՞մ գրողակ պարզեր է: Ազնիւ մարդ մը, մանաւանդ ուսուցիչ մը, երբեք չի պիտի թող տար ինքզինքին մէկը հրաւիրել բեմ և անոր բերնով ազգային վարժարանները անուանարկել: Իբր «չիքեար» լանի մը պէս գովաբանելու համար:

Ճիւրճեան մեծագոյն սխալը գործեց ձեռք տալով այդ մարդուն, որ հասարակութեան մէջ համակրութիւն վայելելէ շատ հեռու է, և որ իր գտնուած բոլոր գործերուն մէջ աւերակ ու ամաշտութիւն սխալ է լոկ ճուայոյ բուերու երեմակի մը հետ: Պ. Ճիւրճեան քիչ ատենէն պիտի տեսնէ որ խաբուած է իրեն տրուած յոյսերուն մէջ, և եթէ ինքզինքը չի ժողովէ, իր «Աղջկանց կրթարան» ալ պիտի արժանանայ այն բաղդին որուն արժանացաւ: «Հայկական կրթարանը»:

Վառնան մասնաւոր վարժարաններու պէտք չունի, այն ալ ասանկ խելճ մասնաւորներու, որինք ու է առաւելութիւն չունենալէ զատ, թէ կազմակերպութեան պակասի թէ պիտուէի չզոյութեան և գործոն ուժերու խելճութեան պատճառաւ, ազգ. վարժարաններէ շատ ու շատ աւելի թերութիւններ կը ներկայացնեն, եթէ օգնել բարեկարգել կուզեն հարուստները, փոխանակ հիմէն նոր մրերեան հանել, աշխատելու, պէտք է եղածը յառաջացնելու աշխատին իրենց ուժերը միացնելով արդէն գտնուածներուն հետ: Ինչ, անպատճառ ազաները զատ վարժարան ունենալու են: Աւ հրապարակագիր մըն է որ ելեր այդ մասնաւորները կը պաշտպանէ, անշուշտ «արգարութեան և անկողնակալութեան համար»: Աւ կը պարծենան թէ՛ իրենք ազգային շահերը պաշտպանելու պաշտօնն ունին: Ինչ՞ ազգ, որ ասանկ պաշտպաններու ձեռք մնացեր է: Իրաւ չեն ամշնար ատոնք, ինչպէս հանդիսականներէն մէկը պօռաց երբ մարդուկը իր խօսքը լինցուց:

ՄՈՒՐԱՏ-ՍՈՒՐԱՏ

ՀԱՆԴԵՍ
ՄԻԹԱՐԵԱՆ ՅՈՒՆԵԱՆԻՆ

Նոր տոմարի սեպտեմբեր 8ին պիտի կատարուի Վենետիոյ Միթարեան ուխտի երկհարիւրամայ յարելեան հանդէսը որ պիտի տեւէ երկուօր:

Առաջին օր

1. Առաւօտեան ժամը 10ին Աւստրիա Գեր. Աբբայ Հայր Տ. Տ. Իզնատիոս Վ. Կիւրեղեան պիտի պատարագէ երաժշտական գործիով և խմբերգով:
2. Պատարագէն վերջը երաժշտական խումբը պիտի երգէ «Չքեզ Աստուած» քառաձայն գոհարանական ալօթքը:

3. Կէսօրին ժամը 2ին ամբողջ հրաւիրելոց պիտի տրուի մեծ ճաշ:

4. Ճաշկերպի ժամանակ պիտի կարգացուին ոտանաւորներ, նամակներ, հեռագիրներ և պիտի բաժնուի Միթար Աբբայօր մեծալը:

5. Երեկոյեան, լուսավառութիւն, վոնքին քառանկիւնը պիտի զարգարուի Վենետիկեան յատուկ գունագեղ լուստերներով:

Երկրորդ օր

1. Առաւօտեան ժամը 10ին Աւստրիա Գեր. Աբբայ Հայր պիտի բանայ Ակադեմիական հանդէսը:

2. Աւագ քահանաներէն մին պիտի կարգայ համառօտ ատենարանութիւն մը:

3. Երաժշտական խումբը պիտի նուագէ յատուկ երգեր:

4. Ընդմէջ երգերու պիտի կարգացուին մաղթանքներ, հեռագիրներ և նամակներ:

5. Հրաւիրեալ հանդիսականաց պիտի տրուի «Միթար» անուամբ բացառիկ պատկերազարդ գիրք մը:

6. Կէսօրին ճաշ:

7. Երեկոյեան հանդիսաւորապէս հիմնարկութիւն Միթար Աբբայօր կանոնաւոր արձանին և ապա երկարատեւ առաջնակարգ Վենետիկեան հրախաղութեան:

«Փ Ա Մ Ա Ն Ա Կ»

Երկամեայ գրական, գիտական և գեղարուեստական հանդէս՝ Պարագրութեամբ Ս. Գ. Հախումեանի հրատարակուած է Ա. Թիւր ճուայոյ պարունակութեամբ և 88 էջերով, տարեկան բացնեցին է 25 Քր. գիմն խմբագրին, 6Ա. ընդլուծ-Պէրնար

* Որուն ծրագրի պատկերն յաջորդ «Բազմազէպով պիտի յղենք բարեկամաց և բաժանորդաց»:

րաքանչիւրը իր մտածումներու ուկիրանին մէջ ընկղմած:

Մուրատ իր նայուածքը երբեմն կը յաւէր, հեռու՛ն, ծովի մը շուշապատ հորիզոնէն ալ անգին, ջանալով մը խրճիլ, տեսնել այն սեղ իր քոյրերու, եղբայրներու խոր տանջանքները:

Ազգական մը երեւումը իր կեանքին մէջ, բաւական եղած էր իր մէջ զարթեցնել երկու սէր միանգամայն:

Սիրելով այդ աղջիկը, սիրած էր իր հայրենիքը:

Այդ աղջիկը օր մը պիտի զոհուէր իր գաղափարներուն, իսկ ինք առանց մրմունջի, առանց նայուածքը անգամ մը ետին դարձնելու, սիրով պիտի հետեւէր անոր, երջանիկ սեպելով զինքը, իր սիրած աղջկան գաղափարներուն զոհուելով:

Փոքրիկ քոսակուսի սենեակին մէջ յանգը սեղանին քով նստած՝ որով վրայ կանխելը իր լուսամտի խառնակէն շուրջնակի տօգոյն, կանաչօրակ լոյս մը կը ցանցէր, նուրբ մասները գանգուրներուն մէջ միսած, երկար կը մտածէր Չարուհի իր Մուրատի հետ ունեցած տեսակցութեան վրայ:

Իրաւունք ունէ՞ր այդ երիտասարդը իր ծնողաց գրկէն կորզելու, արդեօք զինքը չի՞ պիտի անիծէին... Սակայն ամէն կարելի միջոց ի գործ չէ՞ր զրամ զայն իր մտադրութեան հետ կանգնեցնելու համար:

Իր օւրուք ունէ՞ր սակայն միեւնոյն ժամանակ հայրենիքը զրկել իր մէկ կամաւոր զինուորէն, որ իր սիրած և բազուկները կուգար նուրիլ սուրբ գործին:

Պէ՞տք էր քաջաբերել թէ ոչ, ի զո՞ւր կը ջանար այդ սնել զրութե-

նէն ազատել իր փոքրիկ գանկը, ի զուր կը ճգնէր ելք մը ալ այդ հարցին:

Գիշերային խոր լուսութեան մէջ երկար մտածեց Չարուհի և իր կանացի սիրտը, ապագայ մօր մը զգացումներով տոգորուած՝ չի կըրցաւ սառն կերպով երեւակայել Մուրատի ծնողքին իր զաւկին կորուստէն զգալիք անհուն տառապանքը, վիշաւը...

Եւ վճռեց առանց զայն տեսնելու, անակնկալ կերպով մեկնել:

Տեւթային արագութեամբ սկսաւ իր մանր մունր իրեղենէրը հաւաքել, և իր՞ ճամբորդութեան պայուսակը պատրաստել:

Արշալոյսի առաջին վարդագոյն ճառագայթները հազիւ երկնակամարը կը գունաւորէին, երբ Չարուհի արդէն պատրաստ, փակ կառքով մը

ողեկառքի կայարանը կը սուրար, երկու ձեռքերով սիրտը սեղմելով, ու հառաջանք մը խելգրելով կուրծքին տակ:

Հայրենիքի սէրը յաղթած էր իր սիրոյն:

X. Գիւղաքաղաքի բարձունքը, բնագործակ պարտէզներով չրջապատուած տան մը առջին շէնկուղենի, մը լայն հովանուտ ստուերին տակ Չարուհի նըստած էր, իր չորս կողմը հաւաքուած մանուկներուն հետ խօսակցելով, խրատներ տալով, և երբեմն խօսքը ուղղելով արեւատ գէմքով քանի մը երիտասարդ գիւղացիներու, տալ յարգանքով, տեսակ մը կրկնուածութեամբ կը լսէին այդ քնքուշ տարօրինակ աղջկան տաք, կրակոտ խօսքերը:

ՎԱՀԷ
(Մնացեալը յաջորդով)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պատուի մէջ քանի մը հայեր ձեռնարկած են ժողովրդային համալսարան մը հիմնելու, որուն շատոնց կաշխատէին այդ կողմի հայերը: Յատակիկայ հոկտ. 3 ին պիտի բացուի ժողովրդային համալսարանը, պէտք եղած կառավարական թոյլտուութիւնը արդէն ստացուած ըլլալով: Գործին նախաձեռնութիւնը կը պատկանի Ն. Ալիբեկեանի և ուրիշ մէկ քանիննրու, որոնցմէ երկուքը հայու հիմնի են. մէկը կին ըմբիշի Միլիթ Բէգլարիան Օհանեան և ատամնաբոյժ Սր. Ալիբեկեան: Նախաձեռնարկ մարմինը իրեն օժանդակ գործադիր մարմին մը ընտրած է, որ կը բաղկանայ Ն. Ալիբեկեանէ, Մելիքեանէ և Անուշ Բալանթարէ: Գտնախօսութիւններ պիտի ըլլան արձեւորաբար ստատած արանութեան, մասնէմասիքի, երկրաչափութեան, եռանկիւնաչափութեան, աստղաբաշխութեան, մեքենագիտութեան, բնական գիտութեանց, դրական պատմութեան, հոգեբանութեան, փիլիսոփայութեան և ուրիշ ուսմանց վրայ:

— Արհեստքար Երոստաղէօի թղթակիցը կը հերքէ այն լուրը թէ՛ Պապուցի ազգայիններէն Լուծֆիկ Յարութիւնեան Սարգըսեանց իր ուխտագնացութեան առթիւ յանձն առած է 10 խանութիւններ տալ իր ծախքով Ս. Յակոբեանց սեպհական հոգին վրայ: Իրաւ է որ Աղա Լուծֆիկ ազայօրէն ատանկ գիտաւորութիւն մը յայտնէր է, և գտնուեր է մարդ մըն ալ որ իսկոյն պաշտօն ստանձներ է այդ գիտաւորութիւնը հրապարակու գովաբանելու, բայց աղա Լուծֆիկ մերժեք է պայն առարկելով որ երբէք չի սիրեր այդ սեպակ հրատարակութիւնները քանի որ լոկ գեռ խօսք է իր ըսածը:

Պոլսոյ թերթերը որ պատրաստ են աղայի մը բերնէն փրթած ամէն մէկ բառերը մէյմէկ թանկագին բարիքներ նկատելու, այս զոր խօսքերն ալ բաւական գտեր են աղա Լուծֆիկը ազգային բարերար հռչակելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Ի Ռ Ի Բ Ի Ա
ԷՏԻՐՆԷԻ ԿՈՒԻՒԸ.— Պուլկար և հայ հայդուկային խմբի մը և Օսմ. կանոնաւոր զօրքերու միջև, Էտիրնէի մօտ, վերջերս տեղի ունեցած կարեւոր ընդհարումին լուրը մեր Էտիրնէի թղթակիցը անցեալ թուով հաղորդած էր: Այս անգամ նոյն գէպքին առթիւ հետեւեալ մանրամասնու-

թիւնները կը հազորդեն մեզ փրկուէն:

Դեռ մեղի կը պահին թէ և վստահելի սղբերն է քաղուած մանրամասն լուրեր, բայց դէպքին իրողութիւն մը ըլլալը ալ ևս ստուգուած է: Ինչ որ տեղեկացած ենք ցարդ այդ մասին սա է թէ հայդուկային խումբ մը, Էտիրնէի մոթաքի օղու եօրկիի առաջնորդութեամբ յարձակեր են Էտիրնէի մօտ, ազարակի մը վրայ, նպատակ ունենալով ոչ թէ նուրի պէյ մը առեանգել, այլ Էտիրնէի վալին գերի բռնել, որ հոն խնձոքի եկած է եղեր: Դժբաղդարար խումբը կը հասնի այն աստի, երբ արդէն վալին կէտ ժամ առաջ մեկնած էր դէպքի քաղաքի Բիրէճի գիւղի պուլկարները նշմարած ըլլալով զանոնք, կառավարութեան իմաց տուեր են, որ խոտի հալածելու հրահանգ տուեր է իսկոյն և 2,000 հետեակ ու երեք վաշտ ձիաւոր զօրքերով եկած են պաշարել հայդուկները: Ճակատամարտը սահմանազիւն 2 1/2 քիլոմէթր անդին քարոտ տեղ մը կատարուեր է: Ամբողջ խումբը ոչնչացեր է: 7 հոգի սպաննուեր և չորսն ալ ծանրապէս վիրաւորուած գերի բռնուեր են: Թուրքերէն երեք սպայ և 70 է աւելի զինուոր սպաննուեր են, թէ և սաճիկները իրենց սովորութեան համաձայն կը ջանան շատ ջնջին ցուցնել իրենց կորուստը: Կենդանի բռնուածներն են Փարնապատցի Ալալչով, Ֆիրլիպցի Սրիաթօ Իվանով: փախտականներն են Ի. Բիրտաղցի հայ մը, Օննիկ Թորոսեան և Էսկի Չաղրացի կարապետ: Մեռածներուն մէջ կան Քարնոպատի թաղապետութեան գրագիր Բէթր Սաքով, Իվան Սթոյանով, Մալկարացի Թաղէոս Չարմանեան, Թէքիրտաղցի Օննիկ, Էսկի Չաղրացի Անտոն, Թոթաքի օղու եօրկի:

— Մօնսէրվէն անուն Թրանսպի մը, օսմ. Հանր. պարտուց նախադահին քարտուղարը, Բերաի մեծ փողոցէն ժամը 5 ին ատենները անցած միջոցին, յանկարծ ոտիկան մը գէմը ելնելով կոշտութեամբ զայն կալած Սարայի ոտիկանատուները առաջնորդեր է: Հոն շատ ժամեր սպասելէ ու շարչարուելէ ետքը, իր բուն բողոքներուն վրայ արձակուեր է վերջապէս միւլթեսարքին հրամանով:

Մօնսէրվէն իսկոյն գեսպանատան տեղեկացուցեր է իր կամայական ձեռքալալումի գէպքը:

— Արդէն յայտնի է թէ ինչ սոսկալի դժուարութեանց պենթութիւններ վաճառականները իրենց ապրանքները մաքսէն հանելու համար, բայց այդ դժուարութիւնները այսօր անակ առ-

տիճանի մը հասած են որ, եթէ այդ վիճակը քիչ մը շարունակէ, Պոլսոյ վաճառականները պիտի փճանայ մարդկովին: Կալածար մաքսատան մէջ անցեալները բաւական քանակութեամբ փամփոշաներ և վեցարուածները գտնուած ըլլալով, որոնք Յունաստանէն զրկուած ձիթաւոր տակառներուն մէջ պահուած էին, իրատէ մը հրատարակուցաւ, ետեւէն ալ ուրիշ իրատէ մը եկաւ ու ժողովու առաջինին, հրամայելով որ վաճառականներուն ոչ մէկ տակառ, տուփ կամ սնտուկ չի յանձնուի մաքսէն առանց մինչեւ յատակը քննած ըլլալու: Մաքսատուները բոլոր տակառները, առվերը, սնտուկները, ծրարները մէկիկ մէկիկ պիտի բանան, քննեն ու այնպէս յանձնեն, առանց նկատի առնելու որ անոնց բացուելով կրնան ապրանքները աւրուիլ, քայքայուիլ, կամ օդին ազդեցութեամբ ապականիլ:

Այս կերպով, շատ չի տեսած, Պոլսոյ բոլոր վաճառականները միմիկ վրայ պիտի նստին: Անուպակի տուրքերու վարչութիւնը այս բանը կանխատեսելով խնդրած է Պալատէն ետ առնել տոյգ իրատէն, խոտանալով որ ինք պիտի հսկէ պայթուցիկ կամ ուրիշ ազդիւնալ նիւթերու ներմուծումին վրայ: Բայց դեռ պալատէն պատասխան տրուած չէ:

— Սուլթանը հրամայեր է թըրքերէնի թարգմանել գերման բանակին մէջ գործածուող զինուորական տեսութիւնները, մասնաւորապէս զինուորական կանոնագրի, կամուրջներու, երկաթուղիներու, ամրութեանց, հեռագրական շինութեանց գծերու վերաբերեալ կէտերը: Այս թարգմանութիւնները հատոր մը պիտի կազմեն և պիտի բաշխուին այն զօլադասիներուն որոնք զինուորական վարժարանէ ելած չեն, բայց կուզեն բարձր աստիճանի հասնիլ:

Պ Ո Ւ Լ Կ Ս Ր Ի Ա

Նէճիպ Մէլհամէի վերջերս կատարած ճամբորդութիւնը Պուլկարի թրքաբնակ գաւառներուն մէջ, սկսած է արդէն իր հետեւանքները ցոյց տալ: Իսլամ ժողովրդին տրամագրութիւնները պուլկար իշխանութեանց հոն գէպ այն աստիճան թշնամական հանգամանք ստացեր են որ, կը վախցուի թէ տեղէ մը յանկարծ ապստամբութիւն կը ծագի երկրին կառավարութեան գէմ: Ասկէ վատ բազմաթիւ սօֆիաներ, ու մօլլաներ որոնք վերջերս Պուսէն եկած են, ամբողջ իսլամ գիւղերը կը շրջին Պուլկարի և վառնայի կողմերը, ու բնակիչներու կրօնական մոլեռանդու-

թիւնը կը գրգռեն: — Յառաջիկայ կիրակի, յուլիս 19 ին գումարուելիք մակեդոնական ժողովին համար ընտրուած պատգամաւորները մեծամասնութեամբ Պորիս Սարաֆօֆի և իր համախոհներուն կուսակիցներէն են, իսկ փոքրամասնութիւնները միայն չափաւորներու կուսակիցները, որոնց զլուխն է Միխայէլովսքի:

Նախագահի ընտրութիւնը պիտի յետաձգուի ապահովարար մինչեւ Սարաֆօֆի գատին վերջանալը, այն յոյսով որ Սարաֆօֆ ապաստուած պիտի կրնայ նորէն կօմիթէին զլուխն անցնիլ:

Ս Ե Ր Պ Ի Ա

Սուլթանը Ալեքսանտր թագաւորը հրաւիրած է իրեն արցելութեան գալ Պոլիս: Առայժմ ոչինչ որոշուած չէ, որովհետեւ Բեթերայուրկ պիտի երթան և անկէ մտադիր են Վիէննա անցնիլ: Ալեքսանտր թագաւորը մեծ սիրով ընդունիր է Սուլթանին հրաւերը, որովհետեւ անհրաժեշտ է որ Թուրքիա ուժեղորէն միջամտէ Հին Սերպիոյ մէջ կարգը վերահաստատելու, այնքան ծանրապէս խուժած արնազուտներու կողմէ: Նմանապէս Սերպիա կը խորհի այդ առթիւ գիւրուութիւններ ձեռք բերել Գանուրէն Ադրիական երկաթուղու գիծ մը հաստատելու համար:

ՌՈՒՍ ՆԱԽԱՏՈՐՄԻՂԸ

Սեւ ծովի Ռուսական նաւատորմի շարք Վառնա ժամանեց: Ընդ ամէնը բազկացած էր երեք մեծ զբահաւորներէ և չորս փոքրիկ մարտանաւերը ժամը 10 1/2 նաւատորմի Վառնայի հորիզոնին վրայ նշմարուցաւ, իսկ ճիշդ կէս օրին Վառնայի նաւահանգիստը հասաւ: Թնդանօթներու շարք մը բարի գալուստ մաղթեց այցելուներուն, ուրկէ ետքը ուսու ծովակալը և սպաները քաղաք մտան: Ժողովրդին խուռն բազմութիւն մը ամբողջ ծովեղբրքը գրաւած էր:

Ա Չ Դ

Կը ծախուի 1896 ին փարս, 2 ին իշխան Պորիսի մկրտութեան առթիւ սպուած գործածուած նամակագրութեան 1-5-15-25 սանդիւմ:

Դիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ վառնա

ОТГОВОРНИКЪ:

Мурадъ Ераносянъ

Печ. Взаимность — Варна